ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

11 սեպտեմբերի 2019 թվականի թիվ 101-Ա

ք. Երևան

«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2019 թվականի օգոստոսի 23-ին հարուցված թիվ 17 վարչական վարույթի նյութերը՝ ***պարզեց.***

Հանձնաժողովի կողմից հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկում իրականացնելիս արձանագրվել է «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) «Արմենիա Թի-Վի» հեռուստածրագրի կողմից հեռարձակված «Անհասցե ծնվածները» հեռուստասերիալի 2019 թվականի օգոստոսի 22-ի եթերի (ժամը՝ 21:54-ից 22:44-ը ընկած ժամանակահատվածում) ընթացքում ակնհայտ բռնության, կտտանքների ենթարկելու, ֆիզիկական և հոգևոր ցավ պատճառելու ցուցադրված տեսարաններ, որն արգելված է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2019 թվականի օգոստոսի 23-ին Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը 2019 թվականի օգոստոսի 23-ին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Ընկերությանը և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ, ինչպես նաև խնդրել է տրամադրել եթերի հեռարձակման տեսագրությունը և հայտնել նշված հեռուստասերիալի հեռարձակման, կրկնության և անոնսների հեռարձակման ժամերը:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հանձնաժողով ներկայացրած գրավոր պատասխանում Ընկերությունը տեղեկացրել է «Անհասցե ծնվածները» հեռուստասերիալի հեռարձակման, կրկնության և անոնսների հեռարձակման ժամերը, ինչպես նաև ներկայացրել վարչական վարույթի համար հիմք հանդիսացած եթեր հեռարձակված սերիայի տեսագրությունը: Այլ բացատրություններ կամ պարզաբանումներ Ընկերության կողմից գրավոր չի տրամադրվել:

Հանձնաժողովի նիստին՝ վարույթի քննարկման ընթացքում, Ընկերության ներկայացուցիչը պարզաբանում տվեց այն մասին, որ Հանձնաժողովի կողմից

ընդունված սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի որոշման չափորոշիչների նորմերը չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին:

Միաժամանակ, Ընկերության ներկայացուցչի պնդմամբ վարչական վարույթի ընթացքում Հանձնաժողովը խախտել է նաև վարչարարության համաչափության սկզբունքը:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները, բացառությամբ բաժանորդային հեռարձակման, կարող են եթեր հեռարձակվել ժամը 24.00-6.00-ն: Նման հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Հանձնաժողովի կողմից իրավական որոշակիության սկզբունքը պահպանված է, քանի որ նշված իրավախախտումը սահմանված է և վերը նշված օրենքի դրույթում և Հանձնաժողովի կողմից 2019 թվականի օգոստոսի 14-ի ընդունված որոշմամբ, որով սահմանվել է «էրոտիկ բնույթի, սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող հեռուստառադիոհաղորդումների (ֆիլմերի), այլ տեսաձայնաշարային նյութերի որոշման չափորոշիչները»:

Հանձնաժողովը նշում է նաև, որ սույն որոշման հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը համաչափության սկզբունքի պահպանման ապացույցն են:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ հեռուստառադիոհաղորդումների հաշվառման տվյալների հիման վրա Հանձնաժողովը վերահսկում է հեռուստառադիոընկերությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրության և լիցենզիայի պայմաններին: Հանձնաժողովը ընտրանքային սկզբունքով իրականացնում է հեռուստառադիոընկերությունների կողմից հեռարձակվող ծրագրերի ուղղակի դիտարկումներ յուրաքանչյուր հեռուստառադիոընկերության համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր: Դիտարկման արդյունքները համադրվում են հեռուստառադիոընկերությունների ներկայացրած հաշվառման մատյանների տվյալների հետ:

Հանձնաժողովի «էրոտիկ բնույթի, սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող հեռուստառադիոհաղորդումների (ֆիլմերի), այլ տեսաձայնաշարային նյութերի որոշման չափորոշիչները» թիվ 91-Ա որոշման 2-րդ մասը սահմանում է.

Սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող են համարվում այն հեռուստառադիոհաղորդումները (ֆիլմերը), այլ տեսաձայնաշարային նյութերը, որոնք ցուցադրում են՝

ա) վախի, տագնապի, անելանելիության զգացում հարուցող կամ սոսկում առաջացնող տեսարաններ կամ ձայնաշար,

բ) մարդկանց, ինչպես նաև կենդանիների խոշտանգումների, կտտանքների ենթարկելու, ֆիզիկական կամ հոգեկան ցավ պատճառելու, խոշտանգված մարմինների մանրամասների և արյունահեղ տեսարաններ, ինչպես նաև ծրագրերում ողջունվում է բռնությունը կամ ցանկալի են դարձնում բռնության գործադրումը:

Հանձնաժողովն ամրագրում է նաև, որ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում տրված են հասկացությունների սահմանումները՝

1) **գենդեր, գենդերային՝** տարբեր սեռի անձանց ձեռքբերովի, սոցիալապես ամրագրված վարք, կանանց և տղամարդկանց միջև հարաբերությունների սոցիալական հայեցակետ, որն արտահայտվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ՝ քաղաքականությունը, տնտեսությունը, իրավունքը, գաղափարախոսությունը, մշակույթը, կրթությունը, գիտությունն ու առողջապահությունը.

2) **գենդերային խտրականություն (ուղղակի, անուղղակի)՝** սեռի հատկանիշով անձանց իրավունքներն ու շահերը սահմանափակող ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որն ուղղված է կամ հանգեցնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակմանը կամ վերացմանը:

Առկա են բազմաթիվ հետազոտություններ, որոնք փաստում են, որ մեդիայում և հատկապես սերիալներում արտացոլած կանանց նկատմամբ խտրականությունն ու բռնությունը անմիջականորեն ազդում են հանրային կյանքում բռնության օջախների բռնկման և դրանց քանակի, ինչպես նաև դաժանության աստիճանի վրա և սերիալներում բռնության տեսարանների ավելացմանը զուգահեռ, ավելացել են նաև իրական բռնության դեպքերը: Դա մենք տեսնում ենք նաև հայաստանյան իրականության մեջ, երբ կնասպանության դեպքերը ավելանում են:

Հանձնաժողովն ամրագրում է, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի համաձայն արգելվում է Էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների եթեր հեռարձակումը ժամը 24.00-ից մինչև 6.00-ն ընկած ժամանակահատվածից դուրս: Նշված սերիալի ուսումնասիրության և մասնավորապես մշտադիտարկման ենթարկված սերիայում առկա են Օրենքի և սահմանված չափորոշիչների խախտման բազմաթիվ դրվագներ: Այսպես, ամբողջ սերիայի ընթացքում կինն ենթարկվում է կտտանքների սադիստական դրսևորումներով օժտված տղամարդու կողմից: Տղամարդը տևական ժամանակ բռունցքներով, ոտքերով հարվածներ է հասցնում անպաշտպան վիճակում գտնվող կնոջը, փորձում է խեղդել նրան, սպառնում է մկրատով կտրել արդեն արյան մեջ շաղաղված կնոջ քիթը, վերջում նույն մկրատով սպանում է այդ կնոջը: Այդ տեսարանները չունեն որևէ գեղարվեստական արժեք, որևէ ձև պայմանավորված չեն սյուժեի զարգացումով և առաջացնում են միայն տագնապի, վախի զգացմունքներ:

Ավելորդ է ասել, որ սերիալում տեղ գտած այդպիսի բռնության տեսարաններն ազդում են հասարակական, հատկապես երեխաների տրամադրության և առհասարակ կերպի վրա:

Հանձնաժողովը գտնում է, որ ընտանեկան բռնության հանդեպ անհանդուրժողականության ձևավորման հիմնական խոչընդոտներից մեկն էլ հենց սա է՝ առնականության վերաբերյալ պատկերացումներում կնոջ հանդեպ իշխանության բռնի դրսևորումն ընդունելի համարելու հանգամանքը: Տղամարդու կողմից նման ընկալումն ու դրանից բխող վերաբերմունքը հանգեցնում են նոր բռնությունների՝ բռնարարի մոտ ստեղծելով իր վարքի ու արարքների անպատժելիության ընկալում: Եվ այս ամենի հերթական օրինակը «Արմենիա Թի-Վի» հեռուստածրագրի «Անհասցե ծնվածները» ամբողջ հեռուստասերիալն է, այլ ոչ թե միայն քննության առնված սերիան:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 15-րդ մասը սահմանում է.

«15. Էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների եթեր հեռարձակումը ժամը 24.00-ից մինչև 6.00-ն ընկած ժամանակահատվածից դուրս, բացառությամբ բաժանորդային հեռարձակման՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով, Հանձնաժողովի «Էրոտիկ բնույթի, սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող հեռուստառադիոհաղորդումների (ֆիլմերի), այլ տեսաձայնաշարային նյութերի որոշման չափորոշիչները» թիվ 91-Ա որոշմամբ և հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 15-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ««ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

11 սեպտեմբերի 2019թ.
ք. Երևան